ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ՖԵՅՍԱԼ ԻԲՆ ՀՈՒՍԵՅՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1918 թ. հոկտեմբեր – 1920 թ. հուլիս)*

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Սիրիա, Հալեպ, Ֆեյսալ իբն Հուսեյն, հայ տարագիրներ, արաբներ, հայանպաստ քաղաքականություն, աջակցություն, որբահավաք:

Սիրիայի քաղաքական կյանքում բեկումնային էր 1918 թ., երբ վերջ էր դրվում օսմանյան տիրապետությանը: Մեքքայի շերիֆ ու էմիր Հուսեյն իբն Ալիի[1] որդի Ֆեյսալ իբն Հուսեյնը (1885–1933 թթ.) զգալի դերակատարում է ունեցել Սիրիայի[2] պատմության խնդրո առարկա ժամանակահատվածի իրադարձություններում: Վերջինիս հետ է

---

* *Ներկայացվել է 12. III. 2019 թ., գրախոսվել է 01. IV. 2019 թ., ընդունվել է տպագրության 23. V. 2019 թ.:*

[1] *Հուսեյն իբն Ալին կրում էր շերիֆ (ազնվական տոհմից սերված) տիտղոսը, քանի որ Հաշիմյան ցեղից էր ու Մուհամմադ մարգարեի անմիջական ժառանգներից: Երիտթուրքական կառավարությունը, մեծապես տպավորվելով Հուսեյնի ազնվական ծագումով, 1908 թ. Հուսեյնին նշանակում է Հիջազի՝ մուսուլմանների համար կարևոր այդ նահանգի կառավարիչ՝ էմիր: Նախքան այդ արաբական աշխարհում հոգևոր հարգանք վայելող առաջնորդը, Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հրամանով, իր չորս որդիների հետ ստիպված էր բնակվել Կ. Պոլսում:*

[2] *1918 թ. Դամասկոսում թեև հաստատվում է Ֆեյսալի սիրիական կառավարությունը, սակայն Մեծ Բրիտանիան <<Սիրիան>> (պատմաաշխարհագրական այդ եզրույթի մեջ միավորվում էին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Անդրհորդանանը) <<թշնամու օկուպացված տարածք>> է հռչակում. Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Էդմունդ Ալենբին <<Սիրիան>> բաժանում է երեք գոտիների. արևելյան՝ ընդգրկում էր Դամասկոսը, Հալեպը, Ջեբել Դրուզն ու Անդրհորդանանի մի մասը (դրվել էր Ֆեյսալի կառավարման ներքո), հարավային՝ ընդգրկում էր Պաղեստինն ու Անդրհորդանանի մեծ մասը (դրվել էր անգլիական ռազմական կառավարման ներքո), արևմտյան՝ ընդգրկում էր Լիբանանն ու Լաթաքիայի շրջանը (դրվել էր ֆրանսիական ռազմական կառավարման ներքո) (տե՛ս* A l i A. A l l a w i. Faisal I of Iraq, Yale University Press, 2014, p. 153*):*

կապվում առաջին հերթին երկրի ազատագրումը: Էմիր Ֆեյսալի դերը մեծ էր նաև երիտթուրքական կառավարության կողմից իրագործված Հայոց ցեղասպանության տարիներին Սիրիայի անապատներ աքսորված հայ տարագիրների վիճակի բարելավման ու կայացման խնդիրներում:

1918 թ. սեպտեմբերի 30-ին Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Էդմունդ Ալենբիի և Էմիր Ֆեյսալի զորքը մտնում է Դամասկոս: Հոկտեմբերի 5-ին կազմվում է առաջին անկախ կառավարությունը: Այդ կապակցությամբ Էմիր Ֆեյսալը հայտարարում է. <<Իմ տեր Հուսեյն իբն Ալիի կողմից հայտարարում եմ Սիրիայում բացարձակ անկախ սահմանադրական արաբական կառավարության ստեղծման մասին, որն ընդգրկում է ողջ Սիրիան>>[3]: Իսկ հոկտեմբերի 6-ին հայ տարագիրներից դեռևս 1916 թ. նոյեմբերին կազմված Արևելյան լեգեոնի[4] հայկական 3-րդ գումարտակի մասնակցությամբ Ֆեյսալն ազատագրում է Բեյրութը, այնուհետև՝ Հոմսը, Համան և Հալեպը: Ստեղծվում է օրենսդրական խորհուրդ, հիմնվում են դատարաններ, նշանակվում են նահանգապետեր:

Ֆեյսալն ի սկզբանե հայ տարագիրների նկատմամբ դրական էր տրամադրված և հայանպաստ քաղաքականությունն իրականացնելու համար իր աջակիցների թվում ունեցել է մի շարք ազդեցիկ դեմքեր, որոնք հետամուտ էին լինում հայ տարագիրների խնդիրների լուծմանը:

Դեռևս 1908 թ. օսմանյան խորհրդարանում արաբական թերակղզու Ջիդդա և Մեքքա բնակավայրերը ներկայացնող Ֆեյսալն ու իր եղբայր Աբդալլահը հակված էին թուրքահպատակ հայերի բարենորոգչական ծրագրերի իրականացմանը, որի շնորհիվ էլ Ֆեյսալն արժանացավ օսմանյան խորհրդարանի հայ էրեսփոխանների համակրանքին[5]: Մինչև Սիրիայում հայ տարագիրների հայտնվելը 1913 թ. հունիսին Փարիզի արաբական կոնգրեսում[6] ընդունված բանաձևի 8-րդ կետում Ֆեյսալն ու իր կողմնակիցները նշում են. <<Կոնգրեսը հավանություն է տալիս և իր համակրանքն է

[3] D. P i p e s. Greater Syria. The History of an Ambition. NY, 1992, p. 23.

[4] *Պատմագրության մեջ լեգեոնի կազմավորման հանգամանքների վերաբերյալ գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Մանրամասն տե՛ս Ս. Պ ո ղ ո ս յ ա ն. Հայկական (Արևելյան) լեգեոնի 1916–1920 թթ. կազմավորման պատմությունից.– Պատմություն, հ. 1, Երևան, 2002, էջ 116–126, Տ. Պ օ յ ա ճ ե ա ն. Հայկական Լէգէոնը, Ուօթրթաուն, 1965, էջ 9–26:*

[5] *Յ ո վ հ. Ա ղ պ ա շ ե ա ն. Արաբական ազգային-ազատագրական գարթօնքը (համառօտ նօթեր), Պէյրութ, 1959, էջ 14:*

[6] *Մի խումբ առաջադեմ սիրիացիներ՝ մուսուլմաններ ու քրիստոնյաներ՝ Աբդ Ալ-Համիդ Ալ-Զահրաուի գլխավորությամբ, Փարիզում կազմակերպում են արաբական կոնգրես՝ քննարկելու Օսմանյան կայսրությունում բնակվող արաբների իրավունքները:*

արտահայտում Թուրքիայի հայերի պահանջներին, որոնք հիմնված են ապակենտրոնացման սկզբունքի վրա>>[7]:

Հայանպաստ քաղաքականություն իրականացնելու գործում Ֆեյսալին աջակցում էին կրթության նախարար Սատի Ալ-Հուսրին, նրա անձնական քարտուղար, փաստաբան Ֆայեզ Ալ-Ղուսեյնը[8], Հալեպի շրջանի զինվորական կառավարիչ Շուքրի Ալ-Այուբին, Դամասկոսում հեղինակություն վայելող քաղաքական գործիչ Հաշիմ Ալ-Աթասին[9], Օմար Ֆախուրին: Վերջինիս, ում Ֆեյսալն <<Ալ-Ասիմա>> պաշտոնաթերթի խմբագրման համար Բեյրութից հրավիրել էր Դամասկոս, այդ և ուրիշ թերթերում հաճախ է հանդես եկել <<Դեմոկրատ իսլամ>> ծածկանունով՝ հայ գաղթականությանը սրտապնդող ու արաբների նկատմամբ հայերի բարեկամությունը փաստող հոդվածներով[10]: Ցեղասպանության տարիներին հայ գաղթականների հարցերում հետևողական է եղել Դամասկոսից օսմանյան պատգամավոր Ֆարես Ալ-Խուրին: Նա այն մարդկանցից էր, ով Ֆեյսալի հետ հիմք է դրել սիրիական պետությանը[11]:

Դեռևս 1917 թ. հունիսի սկզբներին Ֆեյսալ իբն Հուսեյնը Երուսաղեմից հարավ տեղակայված Շոբեք գյուղում հանդիպել է մի խումբ գաղթական երիտասարդ հայերի հետ: Կարապետ ավագ քահանա Գալֆայանը, ով անցել է տարագրության ողջ ճանապարհը, գրում է. <<Ամէնքս գացինք, համբուրեցինք իր փէշերը: Անակնկալ ընդունելութիւն մը ըրաւ մեզի և ըսաւ. >>Գիտեմ, որ հայերը ուղիղ կերպով կրնան գնահատել մեր այս շարժումը, որովհետեւ անոնք ալ մեզի պէս Թուրք բռնակալու-

---

[7] *Ալի Սուլթան. Սիրիայի պատմություն. թուրքական իշխանության ավարտը (1908–1918), Դամասկոս, 1996, էջ 176 (արաբ.):*

[8] *Ֆայեզ Ալ-Ղուսեյնը Սիրիայի հարավում և Հորդանանին սահմանակից Հաուրանի շրջանի արաբական Սուլութ ցեղից էր: Նա ցեղասպանության նախօրեին երեքուկես տարի զբաղեցրել է Խարբերդի նահանգի Քյախթայի գավառի կայմակամի պաշտոնը, ականատես է եղել հայերի կոտորածներին: 1915 թ. հրաման է ստացել մեկնել Էրզրում, սակայն Դիարբեքիրում մեկուկես ամիս ձերբակալված է մնացել: Նա ականատես է եղել ցեղասպանությանը, որի մասին հուշագրությունն առաջին անգամ տպագրվել է արաբերեն 1917 թ. Կահիրեում, թարգմանվել ու հրատարակվել է ֆրանսերեն (Ժնև, 1917 թ.), անգլերեն (Լոնդոն, 1918 թ.), գերմաներեն (Յուրիխ, 1918 թ.) և հայերեն (Նոր Ջուղա, 1920 թ.) (տե՛ս* El Gusein F՛aiz. Beduin Notable of Damascus, Martyred Armenia. London, 1918, pp. 5–7*):*

[9] *Հաշեմ Ալ-Աթասին մինչև պատերազմը՝ որպես Հաճընի կայմակամ և պատերազմի տարիներին Պուրտուրի մութասարիֆ, հաճախ է ընդդիմացել հակահայ գործողություններ իրականացնող երիտթուրքական կարգադրություններին [տե՛ս Ե. Նաջարյան. Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում (1918 հոկտեմբեր – 1919 հունիս).– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, հ. 6, Երևան, 1974, էջ 135]:*

[10] *Նույն տեղում, էջ 136:*

[11] *Սալեհ Զահր Ադ-Դին. Արաբների անկեղծությունն ու հայերի երախտագիտությունը, Բեյրութ, 2000, էջ 327 (արաբ.):*

թեան դառն լուծը կրած են եւ հիմա իրենց տունէն զրկուած՝ մատնուած են սովի ու քաղցի, ուստի ես կը խոստանամ հայերը իբրև ազատասեր ժողովուրդ մը եւ կը հրավիրեմ զիրենք գործակցութեան>>>>[12]:

Պաղեստինից, Դրուզների լեռներից, Հաուրանից և այլ վայրերից Դամասկոս եկող գաղթականները երախտագիտությամբ էին պատմում Ֆեյսալի՝ հայերին ցուցաբերած նյութական, դրամական, բարոյական օգնության մասին: Կահիրե մեկնող մի խումբ հայերի Ֆեյսալն առաջարկել է Դամասկոս գնալ իր հետ՝ ասելով. <<... թէ որ փառօք մտայ քաղաք, դուք ալ ինձ հետ փառօք կը մտնէք>>[13]:

Հայ գաղթականների և, ընդհանրապես, հայ ժողովրդի նկատմամբ Ֆեյսալի ունեցած դրական վերաբերմունքն է ընդգծում նաև Արամ Սահակյանը[14], ով մի քանի անգամ հանդիպումներ է ունեցել նրա հետ ու իր վկայություններում գրել. <<Հայ ժողովուրդը պիտի յիշէ Ֆէյսալ թագաւորին անունը իբրեւ արտացաւ ու մեծ բարեկամի մը: Ան լաւապէս ճանչցած ըլլալով հայութեան արժանիքները՝ անկեղծ սիրով մը մինչեւ վերջ գուրգուրալից վերաբերում մը ունեցաւ մեր ժողովրդի բեկորներուն հանդէպ: Կը բաւէ յիշել իր խօսքերը. <<Արաբ ժողովուրդէն վերջ, հայ ժողովուրդը կը նկատեմ ինձ հարազատ եւ սիրելի>>>>[15]:

1916 թ. հունիսին Հալեպում ձերբակալվել էր Հալեպի հայոց առաջնորդական փոխանորդ Տեր Հարություն ավագ քահանա Եսայանը[16]: Քաղաքական հանցանքի մեղադրանքով նրան և 60-ից ավելի հայերի կախաղանի էին դատապարտել: 1918 թ. Ֆեյսալի Հալեպը գրավելուց հետո, նրանք բանտից ազատվեցին: Այդ կապակցությամբ Կիլիկիայի հայոց Սահակ Բ կաթողիկոսին նա գրել է. <<... բանտարկեալքս ամբողջովին ազատ արձակուեցանք: Վերածնութեան մթնոլորտ մը, ... 25–30 հազար հայ գաղթականութիւնը ազատ շունչ մ'առնել է շնորհիւ արդարասէր Արաբ կառավարու-

---

[12] Կ. Գալֆաեան. Գիրք Ելից Հայոց, Պէյրութ, 1955, էջ 421:

[13] Եղիշէ եպիսկ. Չիլինկիրեան. Նկարագրութիւնք Երուսաղէմի–Հալէպի–Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպաց եւ անցքերու 1914–1918, Երուսաղէմ, 1927, էջ 47:

[14] 1916 թ. Դամասկոսում մի խումբ հայ երիտասարդներ, այդ թվում Արամ Սահակյանը, ստեղծում են Դաշնակցական կոմիտե, որի կորիզը կազմում են ուրֆացիներ: Կոմիտեի նպատակն էր արտասահմանի հետ կապ հաստատել ու միջոցներ ձեռնարկել սիրիական անապատներում ապաստանած հայ գաղթականներին փրկելու համար: Մանրամասն տե՛ս Ա. Սահակեան. Դամասկոսէն Ագապա (յուշեր Մեծ Եղեռնի Օրերէն).– <<Հայրենիք>> (Պոսթըն), 1950, - 1, էջ 21–33, - 2, էջ 73–85, - 4, էջ 56–66:

[15] Ա. Սահակեան. նշվ. հոդվ., -4, էջ 62:

[16] 1918 թ. դեկտեմբերի 17-ին նրա ջանքերով Հալեպում հիմնվել էր Գաղթականների օգնության վարչությունը, որը զբաղվում էր որբեր ընդունելով և տեղ հասած տարագիրներին օթևան տրամադրելով:

թեան>>[17]: 1918 թ. սեպտեմբերի 29-ի գիշերն անհանգիստ ու անքուն անցկացնելուց հետո Սահակ Բ կաթողիկոսն առավոտյան անձամբ գնում է տեսակցելու Էմիր Ֆեյսալին և ողջագուրվելով ասում՝ <<երկուսս էլ ուրախ ենք, երկուսս էլ շնորհակալության արժանի>>[18]:

1918 թ. օգոստոսին Փարիզի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Ֆեյսալին ուղղված նամակում բարձր է գնահատում նրա գործունեությունը. <<Սիրիայի հարավում գտնվող Ձեր խիզախ զինվորների ջանքերի շնորհիվ մեզ մոտ են հասել մեր ազգի տարագրյալ զավակները: Մենք աղոթում ենք Աստծուն, որ նա օրհնի Ձեր զորքը և Ձեր հաղթանակը հարատև դարձնի: Ձեր զինվորներն ավելացնում են արաբների փառքն ու պատիվը: Յանկացած հայ, ուր էլ որ լինի, արաբների կողմնակիցն է: Ձեր նպատակի արդարացիությունը և ազնիվ մտադրությունն ակնհայտ է>>[19]: Պատասխան նամակում կարդում ենք. <<Էմիր Ֆեյսալին հղած Ձեր նամակը բարյացակամության և սիրո պարզ ապացույց է ... Իրոք, Էմիր Ֆեյսալի՝ տարագիրներին ցուցաբերած օգնությունը յուրաքանչյուր արաբի կրոնական պարտականությունն է ... հայ և նրա վիճակում գտնվող մյուս բոլոր ժողովուրդները մեր համախոհներն են ուրախության և տխրության պահին: Ամենից առաջ Աստծուց հայցում ենք, որ ուժ տա՝ օգնության ձեռք մեկնելու տարագիրներին մինչև ողջ աշխարհին հասանելի լինեն մուսուլմանների իսկական զգացմունքները>>[20]:

Էմիր Ֆեյսալի իշխանության գալուց հետո հայ տարագիրներին ցուցաբերվող աջակցությունը դրվում է ամուր հենքի վրա և կատարվում օրենքի ու պաշտոնական հրամանների շրջանակներում:

1918 թ. հոկտեմբերի 18-ին Դամասկոսի գլխավոր թերթի՝ <<Ալ-Մուքթաբաս>>-ի խմբագրատանը Ֆեյսալը մեծ ընդունելություն է կազմակերպել արաբների անկախության փաստը նշելու համար, որին ներկա են եղել նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբեանց միաբանության անդամ Եղիշե եպիսկոպոս Չիլինկիրյանն ու փոխանորդ Տեր-Հովհաննես քահանան՝ արժանանալով հատուկ հարգանքի և ուշադրության[21]:

1918 թ. հոկտեմբերին Սահակ կաթողիկոսը նույնպես հանդիպել է Ֆեյսալի հետ՝ նրանից հավաստիացումներ ստանալով հայ տարագիրների հարցում արաբական

---

[17] Բ. Եղիայեան. Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914–1972, Անթիլիաս, 1975, էջ 80:

[18] Ատանայի հայոց պատմութիւն, խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս–Լիբանան, 1970, էջ 372:

[19] Ուշագրավ է, որ այս և հաջորդ նամակը տպագրվել են նաև սիրիական մամուլում՝ <<Ալ-Աֆքար>> (Բեյրութ), 14. VIII. 1918, տե՛ս Ն. Արիսյան. Հայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում (1877–1930), Բեյրութ, 2004, էջ 271–272 (արաբ.):

[20] Նույն տեղում, էջ 272:

[21] Եղիշէ եպիսկ. Չիլինկիրեան. նշվ. աշխ., էջ 47:

կողմի հայանպաստ դիրքորոշման վերաբերյալ և <<ուրախութիւնը ունեցած է այդ հովանիին ծանուցումը լսելով Արաբիոյ թէ թագավորի եւ թէ ալ վարիչ իշխանութեանց կողմէ>>[22]: Կաթողիկոսը հետագայում ևս երեք–չորս անգամ հանդիպել է Սիրիայի ղեկավարի հետ, որին որպես թարգմանիչ մասնակցել է Ե. Չիլինկիրյանը: Հանդիպումներից մեկի ժամանակ էմիր Ֆեյսալը պատմել է, որ Կ. Պոլսում 19 տարի ապրելով՝ <<հիացած է Հայոց հանճարին եւ զարգացումին ու ամէն գործի եւ արհեստի մէջ անոնց ունեցած ընդունակութեանց վրայ: Իրեն նախընտրած անկեղծ բարեկամները Հայերը եղած էին Պոլսոյ մէջ: Նոյնիսկ անգամ մը Պոլսէն խուսափելով երբ կը մեկնէր դէպի Մեքքէ, ճանապարհին հետապնդումէ մը ազատուելու համար Հայու մը տուն ապաստանած էր>>[23]:

Նոյեմբերի 11-ին Ֆեյսալը Դամասկոսից այցելել է Հալեպ, հանդիպել քաղաքի պաշտոնատար անձանց ու տարբեր համայնքների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում նա կարևորել է արաբական միասնության խնդիրը՝ հիմքում պետք է դրվեր ազգային և ոչ թե կրոնական սկզբունքը:

Դեկտեմբերի 4-ին Հալեպում կայացել է ցեղասպանությունը վերապրած հայ տարագիրների հանրահավաքը: Նրանք յոթ կետից բաղկացած պահանջագիր են կազմել՝ թուրքական կողմին պատժելու և հայ ժողովրդի նկատմամբ պատմական արդարությունը վերականգնելու ակնկալությամբ[24]: Պահանջագիրը ներկայացվել է Փարիզի Հայ ազգային պատվիրակությանը: Այստեղ կարևոր է նախևառաջ այն փաստի արձանագրումը, որ հայ տարագիրները կարողացել են համախմբվել: Դա արդեն դրական երևույթ էր, որը խոսում է նրանց կազմակերպվածության մասին: Եվ երկրորդ՝ առանց արաբական կողմի թույլտվության հայերը հազիվ թե կարողանային նման հանրահավաք կազմակերպել, ինչը ցույց է տալիս արաբական իշխանությունների դրական վերաբերմունքի մասին:

Ֆեյսալ իբն Հուսեյնի աջակիցներից էմիր Ալի Նասերը, նշանակվելով Հյուսիսային Սիրիայի արաբական զորքերի հրամանատար, իր կայազորի հրամանատար Ալի Ջևդետի[25] ընկերակցությամբ 1918 թ. դեկտեմբերին գնում է իր նոր պաշտոնատեղին՝ Հալեպ, ուր կազմակերպում է հայ տարագիրներին նյութական միջոցներ տրամադրելու գործը: Մամբուջի հայության ներկայացուցիչ Եզնիկ քահանա Աշճյանն ու Եղի-

[22] *Բ. Եղիայեան. նշվ. աշխ., էջ 95:*

[23] *Եղիշէ եպիսկ. Չիլինկիրեան. նշվ. աշխ., էջ 49:*

[24] *Առավել հանգամանորեն տե՛ս Հալէպի Հայկական Միութեան Ա. Շարժում.– <<Հայ Ձայն>> (Հալէպ), Ա տարի, 6. XII. 1918:*

[25] *Ալի Ջևդետը դեռևս պատերազմի սկզբին հայ-արաբական համագործակցությունն ամրապնդելու նպատակով Կահիրեում ստեղծված <<Հայ և արաբ եղբայրություն>> ընկերության հիմնադիրներից մեկն է եղել՝ Մուշեղ եպիսկ. Սերոբյանի և Առաքել Նուբարի հետ (տե՛ս Հայ արաբական յարաբերութիւններ.– <<Հայ Ձայն>>, Ա տարի, 15. II. 1919):*

սե քահանա Այվազյանը՝ որպես տեղի հայ գաղթականության ներկայացուցիչներ, այցելել են Ալի Նասերին: Նրանց վկայությամբ վերջինս <<խիստ բարեացակամ ընդունելութեան մը ետք յայտարարեց՝ ի մտոյ Հայ Գաղթականները Արաբ կառավարութեան օթօմոպիլներով պիտի հաւաքուին և փոխադրուին Հալէպ>>[26]: Մամբուջի տարագիրներին հացահատիկով ապահովելու հրաման է տվել տեղի կառավարիչ Հայդար բեյը:

Էմիր Ֆեյսալի կարգադրությունների՝ գործընթացներին ցուցաբերած խստությամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ Սիրիայի արևելյան մասի ընդհանուր կառավարիչ Ալի Ռեզա Առ-Ռիկաբին 1918 թ. վերջերին և 1919 թ. սկզբներին կառավարական հանդիպումների ընթացքում պարբերաբար անդրադառնում էր նաև հայ տարագիրների դրությանը: Դեկտեմբերի 20–21-ն Ալի Ռեզան հանդիպումներ է ունեցել Հարություն քահանա Եսայանի հետ և հավաստել, որ արաբ ժողովուրդը, ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ այժմ կշարունակի օգնություն տրամադրել հայ ժողովրդին:

Ալի Ռեզան ու Հալեպի շրջանի զինվորական կառավարիչ Շուքրի Ալ-Այուբին հարություն քահանա Եսայանի հետ հանդիպման ժամանակ ընդգծել են. <<Մենք համոզուած ըլլալով, թէ հայը իրաւամբ իրաւունք ունի ապրելու, չզլանանք, ամէն եղբայրական պարտականութիւն>>[27]:

1919 թ. հունվարի սկզբին Ալի Ռեզան կրկին հանդիպել է հալեպահայ գործիչների հետ: Ե. Չիլինկիրյանը գրավոր դիմում է ներկայացրել նրան, որպեսզի իշխանությունները հայերենով նույնպես դիմումներ ընդունեն: Այդ առաջարկը դրական լուծում է ստացել[28]:

Հալեպի հայ տարագիրների կյանքում կարևոր իրադարձություն էր Հալեպի հայոց առաջնորդարանի նախաձեռնությամբ 1919 թ. հունվարի 20-ի Նահատակների ոգեկոչման մեծ սգահանդեսի կազմակերպումը: Այն համազգային բնույթ է կրել. մասնակցել է մոտ տասը հազար հայ: Սկզբում Զեյթունի կամավորների առաջնորդությամբ սգո թափորը Քառասուն Մանկանց եկեղեցուց շարժվել է դեպի Հայոց գերեզմանատուն: Այստեղ բեմ բարձրացած Զեյթունի Ֆռնուս գյուղաքաղաքի Բարդուղիմեոս վարդապետն ադոթք է կարդացել առ Աստված՝ հայ նահատակների հոգու հանգստության համար: Սգահանդեսին մասնակցող թափորը կեսօրին նույն կազմակերպվածությամբ վերադարձել է եկեղեցի, ուր հավաքվել են ֆրանսիական, անգլիական և ամերիկյան կառավարության ներկայացուցիչներ, բարձրաստիճան զինվորականներ, տարբեր պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներ:

---

[26] *Աշճեան քհնյ. Եգնիկ, Այվազեան քհնյ. Եղիսէ.– Ն. Բ. Շէրիֆ Նասըր եւ Մէնպուճի հայերը.– <<Հայ Ձայն>>, Ա տարի, 16. XII. 1918:*

[27] *Սիրալիր յարաբերութիւն հայ եւ արաբ ազգերու միջեւ.– <<Հայ Ձայն>>, Ա տարի, 23. XII. 1918:*

[28] *Եղիշէ եպիսկ. Չիլինկիրեան. նշվ. աշխ., էջ 66:*

Ներկա են եղել նաև Հալեպ քաղաքի ողջ ավագանին՝ Շուքրի Ալ-Այուբին, իշխան Նասերը, Ալի Ջնդետը, ոստիկանապետ Զիյադեն: Այնուհետև բանախոսություններով հանդես են եկել բողոքական ժողովի ատենապետ Հակոբ Ոսկանը, Ազնիվ Չիլյանը: Վերջում ելույթ են ունեցել Հալեպի <<Աթ-Թակադդում>> և <<Ռենեսանս>> թերթերի խմբագիրներ Ռիզկալլահ Քնեյդերն ու Պոլ Պոռեն[29]:

1919 թ. հունվարին էմիր Ֆեյսալը Փարիզում[30] հանդիպել է Պողոս Նուբար փաշային՝ նրա հետ քննարկելով Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի հայ գաղթականության վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներն ու հայ-արաբական հարաբերությունների հետ կապված որոշ հարցեր: Փարիզում Հայ ազգային պատվիրակությունը Ֆեյսալին է հանձնել Մանչեստրի և Մարսելի հայ համայնքների նվիրատվությունները, որպեսզի սիրիական իշխանություններն այն օգտագործեն Դամասկոսի, Հալեպի, Բեյրութի հայ տարագիրներին սնունդ ու բուժօգնություն տրամադրելու համար[31]:

1919 թ. տարեսկզբին Սիրիայում ընդունվում են կառավարական մի շարք հրամաններ ու որոշումներ, որոնք իրենց նպաստն են բերում հայ տարագիրների փրկության և հայկական միջավայր վերադառնալու գործին: Այսպես, օրինակ, հունվարին Ֆեյսալի հրապարակած հրամանը. <<Նորին գերազանցություն էմիր Ֆեյսալի հրամանը հայ կանանց և նրանց երեխաներին վերադարձնելու կապակցությամբ>> խորագրի տակ, ուր ասվում է. <<Այսօր մենք գրել ենք Հալեպի ռազմական կառավարիչ Ջաֆար փաշային, որ նա հնարավոր միջոցներ ձեռնարկի, թերթերում հայտարարություն տա, որպեսզի բոլոր նրանք, ովքեր իրենց մոտ պահում են հայ կանանց, երեխաների, աղջիկների, թաքցնում են նրանց ու չեն վերադարձնում իրենց հարազատներին կամ կառավարությանը, անմիջապես կենթարկվեն դաժան պատժի: Այս հրամանի նպատակը նրանց գտնվելու վայրը պարզելն է: Նրանց վերադարձնողները կարժանանան իմ հարգանքին>>[32]: Ֆեյսալը նամակով տեղեկացրել է տեղական իշխանություններին, աշիրաթների ղեկավարներին, ինչպես նաև՝ Հալեպի հայոց առաջնորդարանի փոխանորդ Հարություն քահանա Եսայանին:

Հալեպի շրջանի զինվորական նորանշանակ կառավարիչ Ջաֆար Ալ-Ասքարին, ի պատասխան Ֆեյսալի հրամանի, նրան է ուղարկել հետևյալ գրությունը. <<Պատիվ

[29] *Մանրամասները տե՛ս Համազգային սգահանդէսը 1919 Յունվար 20.– <<Հայ Ձայն>>, Ա տարի, 22. I. 1919, Հ. Ա ր ա մ ե ա ն. Սգահանդէսին պատմական օրը.– <<Հայ Ձայն>>, Ա տարի, 25. I. 1919, Համազգային սգահանդէս Հալէպի մէջ.– <<Արեւ>> (Գահիրէ), Դ տարի, 29. I. 1919:*

[30] *Էմիր Ֆեյսալը 1918 թ. նոյեմբերի 21-ից 1919 թ. ապրիլի 30-ը եղել է Եվրոպայում՝ Սիրիայի հարցով մեծ տերությունների հետ բանակցելու համար:*

[31] *Ե. Ն ա ջ ա ր յ ա ն. նշվ. հոդվ., էջ 158:*

[32] *Հալեպի <<Աթ-Թակադդում>> թերթի վավերագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին օսմանյան պետության մեջ ու Սիրիայում, Հալեպ, 1992, էջ 324:*

ունեցա տեղեկանալու Նորին մեծություն Ֆեյսալի հրամանին՝ հայ երեխաներին, կանանց, աղջիկներին վերադարձնելու վերաբերյալ: Այդ մասին տեղեկացվել են թերթերը, որոնք էլ կզբաղվեն հրամանի տարածմամբ>>[33]:

Էմիր Ֆեյսալի վերոնշյալ հրամանից հետո մեծ թափ է ստանում սիրիական անապատներից հայ որբերի հավաքագրման աշխատանքները:

Դեռևս 1918 թ. օգոստոսին Ուրֆայի Լևոն Յոթնեղբարյանի ու նրա աջակիցների կողմից ստեղծվել էր <<Փրկության առաքելությունը>>, որն իր որբահավաք աշխատանքները սիրիական անապատներում սկսում է Ֆեյսալի վստահելի մարդկանցից մեկի՝ Զաքի բեյի խմբի հետ: Նա որոշ ցուցումներ էր տալիս հայ որբախույզներին, թե նրանք ինչ քայլեր պետք է ձեռնարկեն թուրքերի հետ հնարավոր առերեսումից խուսափելու համար: Ջերել Դրուզի առաջնորդ շեյխ Հուսեյն ալ-Աթրաշը Լ. Յոթնեղբարյանին ու նրա աջակիցներին հավաստիացնում է. <<Մենք ամեն ինչ կանենք հայերի փրկության և ազատության համար: Մենք կզոհաբերենք ամեն ինչ>>[34]:

Լ. Յոթնեղբարյանի նախաձեռնությամբ Ֆեյսալի վերոհիշյալ հրամանի կրկնօրինակը տարածվել էր Հաուրանի տարածաշրջանում: 1919 թ. հունիսի 25-ին Ֆեյսալը հրամանագիր է ստորագրել, որով Լ. Յոթնեղբարյանին թույլ էր տրվում սկսել Հաուրանի և հարակից շրջանի հայերին երկաթուղով Դերաա կամ Դամասկոս անվճար տեղափոխելու աշխատանքները[35]:

Տարագիրներին Դամասկոս տեղափոխելուց հետո Լ. Յոթնեղբարյանը՝ իր աջակիցներ Կարապետ Գավաֆյանի, Եսայի Կերեշեքյանի և Հովհաննես Գավաֆյանի հետ շարունակում են որբահավաք գործունեությունը. <<Գյուղից գյուղ, տնից տուն, անապատից անապատ մենք հավաքում էինք հայ որբերին և ուղարկում հայկական որբանոցներ կամ Դամասկոսի ապաստարաններ: Համայակ Ուղուրլյանը ղեկավարում էր ապաստարանի գործերը և անձամբ վճարում նրանց խնամքի համար>>[36]: <<Միութիւն>> թերթից տեղեկանում ենք. <<Դամասկոսի մէջ Եօթնեղբայրեան արշաւախումբը վերջերս Հաւրանի մօտ քանի մը կարեւոր ազատագրումներ եւս ըրաւ և 20-ի չափ որբեր յանձնուեցան Հ. Բ. Ը. Միութեան Դամասկոսի Որբանոցին>>[37]:

Լ. Յոթնեղբարյանն ու նրա աջակից, թիմակից Անդրանիկ Գենճյանը հանդիպել են էմիր Ֆեյսալին՝ ներկայացնելով <<Փրկության առաքելության>> գերնպատակը՝ կանխել այն հայերի, մասնավորապես կանանց ու երեխաների ինքնության կորուստը, ովքեր գտնվում են արաբների մոտ և կանգնած են միաձուլման վտանգի առջև:

---

[33] *Նույն տեղում:*

[34] Crows of the Desert. Memoirs of Levon Yotnakhparian. California, 2012, p. 65.

[35] *Նույն տեղում, էջ 82–83:*

[36] *Նույն տեղում, էջ 97:*

[37] *<<Միութիւն>> (Գահիրէ), Ը տարի, 1919, հուլիս-օգոստոս, էջ 51:*

Ֆեյսալը Լ. Յոթնեղբարյանին ազատ գործելու փաստաթուղթ է տրամադրել, որին հաջորդել է մամուլում տպագրված հայտարարությունը. <<Ովքեր իրենց տներում ունեն հայ որբեր, պետք է նրանց հանձնեն Լևոն Յոթնեղբարյանի ղեկավարած կոմիտեին>>[38]:

Սիրիայի ղեկավարի այսօրինակ աջակցությունը մեծապես հեշտացնում է իսլամական միջավայրում գտնվող կանանց ու երեխաների որոնումները: Հալեպի ու Դամասկոսի կառավարիչները խիստ հրահանգներ էին ստանում՝ ամեն կերպ օժանդակել այս գործն իրականացնող անձանց ու խմբերին: Ֆեյսալի հրամանին անդրադարձել են ժամանակի գրեթե բոլոր հայկական և արաբական պարբերականները: Այսպես, օրինակ, <<Կիլիկիա>> թերթը գրում է. <<Նկատելով, որ որոշուած է վերադարձնել հայերը, անոնք, որոնք իրենց տան մէջ հայ գաղթականներ կան, պարտաւոր են անոնց մասին լուր տալ քաղաքային ոստիկանութիւն, որպեսզի յատուկ ցուցակի մէջ արձանագրուի անոնց անունները: Անոնք, որոնք այս ազդարարութենէն յետք իրենց մօտ կը պահէն գաղթականներէն մէկը պիտի ենթարկուին օրինական հետապնդութեան>>[39]:

Լ. Յոթնեղբարյանն իր հուշագրության մեջ որբահավաք գործունեության մասին գրում է. <<Մենք ամեն ինչ արեցինք վերադարձնելու համար հայ որբերին, բայց հազարավորներին մենք փրկել չկարողացանք, նրանք մուսուլմաններ ու արաբներ դարձան, ինչը մեծ կորուստ էր մեր ազգի համար>>[40]: Իսկ արդեն 1920 թ. գարնանը էմիր Ֆեյսալը, հաշվի առնելով Սիրիայում տիրող քաղաքական անկայուն իրավիճակը, առաջարկում է Լ. Յոթնեղբարյանին ժամանակավորապես դադարեցնել որբահավաքման աշխատանքները[41]:

Խնդրո առարկա ժամանակահատվածում էմիր Ֆեյսալն աջակցել է նաև Դամասկոսի Դաշնակցական կոմիտեին: Ա. Սահակյանն իր հուշագրությունում նշում է. <<Մեր անցած ճամբու ընթացքին ամենէն ջերմ ընդունելութիւնը գտանք Շերիֆ Ֆեյսալին մօտ: Երբ տեղեկացաւ, որ կ(ուզենք Կովկասի հայկական զօրքերուն միանալ, թելադրեց մեզ անցնիլ Կիպրոս, որտեղ հայկական լեգէոն մը կազմուելու վրայ էր>>[42]:

Հայ տարագիրների վիճակը փոքր-ինչ բարելավվում է նրանց ամսավճարներ և սնունդ տրամադրելու վերաբերյալ կառավարության՝ 1919 թ. փետրվարին ընդունած որոշումը. <<Նախորդ կառավարության (երիտթուրքական – Ն. Մ.) ճնշումների հետևանքով դուրս քշված 48 հազար գաղթականների համար հնարավոր չէ բյուջեից

[38] Crows of the Desert. Memoirs of Levon Yotnakhparian, p. 98.

[39] *Հայերու ներգաղթը.– <<Կիլիկիա>> (Ատանա), Ա տարի, 23. V. 1919:*

[40] Crows of the Desert. Memoirs of Levon Yotnakhparian, p. 113.

[41] *Նույն տեղում:*

[42] *Ա. Ս ա հ ա կ է ա ն. նշվ. հոդվ., № 4, էջ 62:*

որևէ հատկացում անել, սակայն կարիքավորների համար հարկավոր է կիրառել ուտելիք բաժանելու որոշումը և նրանց տրամադրել անհրաժեշտ ամեն ինչ>>[43]:

Հայ տարագիրների մի մասի սոցիալական վիճակի բարելավմանն էր ուղղված Ֆեյսալի՝ Հալեպի հայ վաճառականների պարտքերի հետաձգման մասին՝ 1919 թ. մարտի 26-ի որոշումը[44], որը վավերացվում է Շուրայի Խորհրդում (խորհրդարանում): Դրանում արձանագրվում է. 1. հայերից պահանջված բոլոր պարտքերն ու պահանջները հետաձգվում են մինչև 1919 թ. տարեվերջ և այդ թվականից հետո հարկավոր է վճարումներ անել չորս մասնաբաժիններով և այլն, 2. եթե պարտատեր հայերից մեկը ցանկություն ունի այլ երկիր տեղափոխվել, վերջինս իրավունք ունի պահանջել երաշխավորագիր, որը չներկայացնելու դեպքում տեղափոխությունն արգելվում է:

Ֆեյսալն ազգային փոքրամասնություններին սիրաշահելու քաղաքականություն է վարել, իսկ հայերին աջակցելը՝ դարձրել դրա կարևոր կետերից մեկը: 1919 թ. մայիսի 9-ին[45] Դամասկոսի կառավարական տանն արված պաշտոնական հայտարարությունում նա անդրադարձել է ազգային փոքրամասնությունների հետ հարաբերություններին. <<… պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել փոքրամասնությունների իրավունքներին ու պահանջներին, որպեսզի վերանա ատելությունը և կրոնական թշնամանքը, որ ստեղծել էին թուրքերը>>[46]: Այնուհետև, էմիր Ֆեյսալը, դիմելով ներկաներին, կոչ է արել. <<… պարտավոր ենք ցույց տալ դաշնակիցներին, որ մենք մեր անկախությանը ձգտող ազգ ենք, որ մենք ցանկանում ենք պաշտպանել մեր մեծերին և փոքրերին, մեր մերձավորներին և հարևաններին, հարգում ենք բոլոր նրանց, ովքեր գալիս են մեր երկրում աշխատելու մեզ համար … Ձեզ եմ դիմում միավորվելու հատուկ խնդրանքով, սա մեր բոլորի պարտականությունն է և մեր ապագա ձեռնարկումների միակ հիմնաքարը>>[47]: Ելույթ է ունեցել նաև հայ եպիսկոպոսը. <<Շնորհակալություն եմ հայտնում արաբներին՝ պատերազմի չորս տարիների ընթացքում ցուցաբերած օգնության և մարդասիրության համար: Մեր պատմությունն արաբների անունը կգրի ոսկե տառերով>>[48]:

---

[43] *Սույն որոշումը տպագրվել է սիրիական կառավարության պաշտոնաթերթ <<Ալ-Ասիմա>>-ի՝ 1919 թ. փետրվարի 27-ի համարում (տե՛ս Ն. Ա ր ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 354):*

[44] *Որոշումը տպագրվել է <<Ալ-Ասիմա>>-ի 1919 թ. ապրիլի 8-ի համարում (տե՛ս նույն տեղում, էջ 356–357):*

[45] *Արաբ պատմաբան Ալի Սուլթանը Ֆեյսալի հայտարարության համար հիշատակում է մայիսի 5-ը: Տեքստն ամբողջությամբ տե՛ս Ա լ ի Ս ու լ թ ա ն. Սիրիայի պատմություն, Ֆեյսալ իբն Հուսեյնի իշխանությունը (1918–1920), Դամասկոս, 1996, էջ 431–442 (արաբ.):*

[46] *Նույն տեղում, էջ 440:*

[47] *Նույն տեղում, էջ 441–442:*

[48] *Նույն տեղում, էջ 440:*

Էմիր Ֆեյսալի այս հայտարարությունը Սիրիայում ապաստանած հայ տարագիրների համար կարևոր փաստ էր: Վերջինս մի քանի առումներով անդրադառնում էր հայ տարագիրներին՝ որպես ազգային փոքրամասնություն, գաղթականներ, կրոնական փոքրամասնություն, և բոլոր դեպքերում Ֆեյսալի դիրքորոշումը դրական էր, հայանպաստ. նա անմիջականորեն ուղղորդում էր տեղական ղեկավարության՝ հայերի հետ ունեցած հարաբերությունները:

Ֆեյսալ Իբն Հուսեյնը Հալեպի շրջանի ռազմական կառավարիչ Ջաֆար Ալ-Ասքարիի ընկերակցությամբ 1919 թ. հունիսի սկզբներին այցելել է նաև Հալեպի հայոց առաջնորդարան: Այստեղ նրան Սահակ կաթողիկոսը սինոդականներով ու բազմաթիվ քահանաներով <<փառաւոր ընդունելութիւն մը ըրաւ>>[49]: Հանդիպման ժամանակ <<Հայ ազգային միության>> ատենապետ Գաբրիել վարդապետ Գասպարյանը հատուկ խնդրանքով դիմել է Ֆեյսալին. <<Կիներու, աղջիկներու և մանչերու մեծ թիւ մը բռնագաղթին պատճառով հեռացուելով իրենց մայր երկրէն կը գտնուին Իրագի և Սուրիոյ քաղաքաբնակ և վաչկատուն Արաբներուն քով: Այս աղէտեալներուն դարձը իրենց սիրելիներուն և ազգին անհրաժեշտ պետք մըն է, մարդկային պարտականութիւն մը և անվիճելի իրաւունք մըն է>>[50]: Ներկաները Ֆեյսալին խնդրել են իր հոր՝ Հուսեյն իբն Ալիի 1918 թ. ապրիլի ուղերձն[51] ընդհանրացնել ու համապատասխան միջոցառումներ ձեռնարկել. <<... կը խնդրենք, որ այս խնդիրն վերջնականապէս լուծէք ու այդպէսով յավերժացնէք ձեր յիշատակը Ձեր բազմաթիւ բարիքներու մէջ>>[52]: Գ. վարդապետ Գասպարյանն արաբերեն ելույթում ևս մեկ անգամ փաստել է. <<... ամէն զուլումի, խժդժութեան և ենթակայ Հայ ու Արաբ տարրը ձեռք-ձեռքի տուած կողք-կողքի կռուեցին թշնամու դէմ>>[53]:

Չնայած Էմիր Ֆեյսալի վարած հայանպաստ քաղաքականությանը՝ այնուամենայնիվ, հայ-արաբական փոխհարաբերություններում առաջացել են որոշակի լարվածություններ, որոնց դրսևորումներն են 1919 թ. փետրվարի 28-ի Հալե-

[49] *Եղիշէ եպիսկ. Չիլինկիրեան. նշվ. աշխ., էջ 49:*

[50] *Էմիր Ֆեյսալ Հալէպի մէջ, հայ որբերն ու կիները վերադարձնելու հրաման.– <<Կիլիկիա>>, Ա տարի, 27. VI. 1919:*

[51] *1918 թ. ապրիլին Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալին հատուկ ուղերձով դիմել է իր որդուն՝ Ֆեյսալին, և պատգամել օգնել Սիրիա հասած բոլոր հայ տարագիրներին [մանրամասն տե՛ս Նայիմ Ալ Յաֆֆի. Հայերի ցեղասպանությունը և արաբական հասարակական դիրքորոշումը, Լաթաքիա, 1992, էջ 68 (արաբ.)]:*

[52] *Էմիր Ֆեյսալ Հալէպի մէջ, հայ որբերն ու կիները վերադարձնելու հրաման.– <<Կիլիկիա>>, Ա տարի, 27. VI. 1919:*

[53] *Նույն տեղում:*

պի դեպքերը, երբ արաբ և թուրք ոստիկանության ու ամբոխի կողմից հայ գաղթականները ենթարկվեցին հարձակման ու կոտորածի[54]:

Հալեպի դեպքերը, ճիշտ է, կտրուկ չեն վատթարացրել հայ-արաբական հարաբերությունները, բայց, այնուամենայնիվ, որոշակի թշնամության և անվստահության մթնոլորտ են ստեղծել երկու ժողովուրդների հարաբերություններում, ինչը կարճ ժամանակահատվածում հարթվել է: Ընդառաջելով Հալեպի հայոց առաջնորդարանի դիմումներին՝ բրիտանական իշխանությունների կողմից այս դեպքերի կապակցությամբ ստեղծված ռազմական դատարանը ձերբակալել է հայկական կոտորածների մոտ 100 պատասխանատուների, աշխատանքից ազատել հայերի նկատմամբ բռնություններ գործած բազմաթիվ պաշտոնյաների և 35 անձանց դատապարտել մահվան[55]: Հարկ է նշել, որ 1919 թ. նոյեմբերին արաբական ավագանու ներկայացուցիչների առաջարկով ստեղծվել էր <<Հայ-արաբական բարեկամության կոմիտե>>, որի նպատակը հայ-արաբական հարաբերություններում լարվածության թուլացնելն էր և հայկական շրջանակներում այն իրողության գիտակցումը՝ մի քանի արաբների՝ հայերի նկատմամբ բռնությունների իրագործման փաստը չի կարելի վերագրել Հալեպի ողջ ազգաբնակչությանը և վերջինիս մեղավոր ճանաչել:

** * **

Ֆեյսալն ու նրա կողմնակիցները ցանկանում էին հայ տարագիրների նկատմամբ արաբների դրական վերաբերմունքն էլ ավելի ամրապնդել, ինչպես նաև ձգտում էին նրանց հեռու պահել ֆրանսիական ազդեցությունից: Այս քաղաքականության նպատակն էր նաև հայ-արաբական հարաբերությունների մերձեցման շնորհիվ հսկողություն հաստատել այն ոլորտներում, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի վերջում հայերի ձեռքում էին գտնվում[56]: Նշենք, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան էլ իրենց հերթին էին փորձում օգտագործել հայ տարագիրներին:

---

[54] Դեպքերի մանրամասների համար տե՛ս Հ. Թոփուզյան. Միրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), Երևան, 1986, էջ 214–220, Հալէպի ջարդը.– <<Վերածնունդ>> (Փարիզ), Գ տարի, 15. IV. 1919, էջ 123–124, Հալէպի կոտորածը.– <<Կիլիկիա>>, Ա տարի, 14. III. 1919, Ալի Սուլթան. Միրիայի պատմություն, Ֆեյսալ իբն Հուսեյնի իշխանությունը (1918–1920), էջ 114:

[55] Հալէպէն Լուրեր.– <<Կիլիկիա>>, Ա տարի, 23. V. 1919, Մահու պատիժ Հալէպի մէջ.– նույն տեղում, 17. VI. 1919:

[56] Առաջին աշխարհամարտից հետո Հալեպի մեքենաշինական, մետաղագործական, կաշվի ու կոշիկի, ակնեղենի, հյուրանոցային, ժամագործական և այլ ձեռնարկատիրությունների 20–50 տոկոսի սեփականատերերը հայեր էին: Ավելի նշանակալի էր հայերի դերն առողջապահության ոլորտում: Հայերի ձեռքում էին կենտրոնացած նաև

Հարկ է նշել, որ հետպատերազմյան մի կարճ ժամանակահատվածում փոքրամասնությունների գործոնը հիմնական նշանակություն է ձեռք բերում բրիտանացիների ու ֆրանսիացիների՝ տարածաշրջանային ռազմավարության մեջ: Այսպես, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան աշխատում էին սիրաշահել ու աջակցել նախկին կայսրության մաս կազմող մի շարք կրոնական ու ազգային փոքրամասնություններին՝ վերջիններիս իրենց նպատակների համար օգտագործելու մտադրությամբ: Բացի այդ, փոքրամասնություններին պաշտպանելու ռազմավարությունը կարող էր իրար դեմ դուրս բերել տարածաշրջանի ժողովուրդներին:

Ֆեյսալի և նրա համախոհների աջակցությանը զուգահեռ՝ հայ տարագիրների վիճակի բարելավումն իրականացվում էր նաև ազգային, բարեգործական ու միսիոներական կազմակերպությունների գործունեության շնորհիվ: Այս ժամանակահատվածում են վերակազմվում արդեն գործող որբահավաք հանձնաժողովները, ստեղծվում նորերը, որոնք սկսում են ավելի կենտրոնացած ու արդյունավետ գործել՝ դուրս գալով ընդհատակյա գործունեությունից:

Ոգևորված Ֆրանսիայի՝ Կիլիկիայում նոր անկախ պետություն հիմնելու հայտարարություններից՝ բազմահազար հայեր Սիրիայի տարբեր տեղերից գալիս էին Հալեպ: Հիմնականում Հայկական լեգեոնի[57] պաշտպանության ներքո հայերը վերադառնում են Կիլիկիա: Հալեպում Հայկական լեգեոնում կամավորագրվելու համար դիմում են 2.000 երիտասարդներ, որոնցից 750-ը ոտքով տեղափոխվում է Ադանա, սակայն զենք չեն ստանում:

Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան աստիճանաբար իրականացնում էին Սայքս-Պիկոյի համաձայնագրի՝ տարածքների վերաբաժանման դրույթները: 1919 թ. նոյեմբե-

---

ճարտարապետությունը, լուսանկարչությունը, գեղարվեստական բացիկների արտադրությունը, երաժշտական գործիքների և ձայնապնակների առևտուրը (տե՛ս Ե. Ն ա ջ ա ր յ ա ն. նշվ. հոդվ., էջ 136):

[57] 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո Արևելյան լեգեոնի հայ սպաների ու Նուբար փաշայի կողմից դիմումներ են լինում լեգեոնը վերանվանելու Հայկական և վերանայելու կանոնադրությունը: 1919 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 546–9/11 հրամանով կազմավորվում է Հայկական լեգեոնը: Գործունեության առաջին տարում լեգեոնն ուներ հետևյալ պատկերը՝ հայկական 4 գումարտակ՝ 4.124 և սիրիական մեկ գումարտակ՝ 698 զինվորներով: 1919 թ. դեկտեմբերի 17-ի հատուկ հրամանով ֆրանսիական ռազմական նախարարն առաջարկում է լեգեոնում թողնել միայն 2 հայկական գումարտակ՝ փոխարենը մեծացնելով սիրիականը: 1920 թ. մայիսի 1-ին հրահանգ է լինում սկսել Հայկական լեգեոնի վերջին գումարտակի լուծարումը [տե՛ս Ա. Գ ա ր ա մ ա ն ու կ ե ա ն. Հայկական Լէգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր. – <<Հայկազեան հայագիտական հանդէս>> (Պէյրութ), հ. Ե, 1974, էջ 83–85]:

րին 1-ից Արևմտյան Սիրիայում բրիտանական զորքերն աստիճանաբար փոխարինվում էին ֆրանսիական զորքով:

Այս իրադարձություններին զուգահեռ Սիրիական ընդհանուր կոնգրեսը կոչ էր անում ժողովրդին դիմադրել ֆրանսիական զորքերին ու ամեն ինչ անել ձախողելու նրանց գաղութատիրական ծրագրերի իրագործումը[58]: 1919 թ. դեկտեմբերի 21-ին օրենք է հաստատվում զինապարտության մասին[59], որը նախատեսում էր զորակոչել 20–40 տարեկան բոլոր տղամարդկանց: Դա նոր անհանգստություն է առաջ բերում հայ տարագիրների շրջանում: 1920 թ. ընթացքում Սահակ կաթողիկոսը Դամասկոսից և Հալեպից դիմումներ է ստանում այն մասին, որ նորակազմ արաբական կառավարությունն իր զինվորագրման ընդհանուր ծրագրի մեջ հրահանգել է զինակոչել նաև հայերին: Կաթողիկոսը փետրվարի 7-ին նամակով խնդրում է Ֆեյսալին հայերին վերաբերող այդ ծրագրի իրագործումը հետաձգել, մինչև միջազգային որոշումներով հստակեցվի նրանց կարգավիճակը. <<Վստահ ըլլալով Ձեր բարեացակամ սրտին մէջ ամրացած հայասէր զգացումին ու ջերմ վերաբերումին … նկատելով, որ հպատակութեան որոշումը, զինվուրական ծառայութեան ընդհանրացումը եւ երկու ազգերու միջեւ փոխադարձ իրավունքներու ճշդումը կախում ունին կրկին կառավարութիւններու վերջնական կազմութենէն, ներկայիս կը խնդրեմ, որ հաճիք հրամայել զինուորագրութեան յետաձգումը սուրիաբանակ բոլոր հայերու, մինչեւ Վեհաժողովին եւ երկու անկախ կառավարութեանց որոշումը եւ համաձայնութիւնը հպատակութեան եւ յարակից խնդիրներիու մասին>>[60]: Սահակ կաթողիկոսը, մտահոգվելով, որ նման ձեռնարկումը կարող է լարում մտցնել հայ-արաբական հարաբերություններում, մինչ Ֆեյսալին դիմելը նույն հարցին դրական լուծում տալու նպատակով խնդրում է նաև Պողոս Նուբար փաշայի միջամտությունը: Հարկ է նշել, սակայն, որ զինապարտության օրենքը քաղաքական բարդ իրավիճակում չգործեց անգամ արաբների համար, այնպես որ հերթը հայերին չհասավ: Այդ օրենքը, ըստ էության, չգործադրվեց[61]:

1920 թ. հունվարի 6-ին Փարիզում ստորագրվում է ֆրանս-սիրիական համաձայնագիրը՝ Ջորջ Կլեմանսոյի և էմիր Ֆեյսալի միջև[62]: Ազգային-ազատագրական պայքարը

---

[58] Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան. Սիրիան անկախության համար մղվող պայքարում (1917–1946), Երևան, 1975, էջ 75:

[59] Саид Амин. Восстание арабов в XX в. М., 1964, с. 86.

[60] Բ. Եղիայեան. նշվ. աշխ., էջ 96:

[61] Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 96:

[62] Ըստ համաձայնագրի՝ ֆրանսիական կառավարությունը <<երաշխավորում>> էր Սիրիայի անկախությունն այն սահմաններում, որը կճանաչեր Փարիզի խաղաղության վեհաժողովը: Ֆեյսալը պարտավորվում էր Ֆրանսիայից խորհրդականներ և մասնագետներ բերել՝ Սիրիայի պետական ոլորտներում ու բանակում բարեփոխումներ կատարելու նպատակով: Սիրիական

գնալով ուժեղանում էր: Եվրոպայում գտնվելու ժամանակահատվածում Ֆեյսալին փոխարինած եղբայրը՝ Զեյդ իբն Հուսեյնը, հեռագրում է նրան. <<Ես չեմ կարող կանգնեցնել հեղափոխությունը>>[63]: Մարտի 6-ին Դամասկոսում բացվում է Սիրիական ընդհանուր կոնգրեսը՝ Հաշիմ Ալ-Աթասիի գլխավորությամբ: Մարտի 8-ին հայտարարվում է Սիրիայի միասնական ու անկախ պետության ստեղծման ու էմիր Ֆեյսալի թագավոր հռչակման մասին: Հաջորդ օրն Ալի Ռեզա Առ-Ռիկաբին կազմում է Սիրիայի թագավորության առաջին կառավարությունը, սակայն ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Սիրիայի մանդատը հանձնվում է Ֆրանսիային: Հուլիսի 14-ին ֆրանսիական կառավարությունը Դամասկոսին վերջնագիր է ներկայացնում, որով Ֆեյսալից պահանջվում էր ճանաչել ֆրանսիական մանդատը և պատիժ սահմանել հակաֆրանսիական գործունեություն ծավալողների նկատմամբ[64]: Հուլիսի 19-ին Սիրիական ընդհանուր կոնգրեսը վերահաստատում է Սիրիայի անկախ ու ինքնիշխան պետություն լինելու փաստը և անօրինական համարում օտարերկրյա ցանկացած միջամտություն[65]: Սակայն հուլիսի 24-ին Մայսալունի ճակատամարտն ավարտվում է էմիր Ֆեյսալի զորքի պարտությամբ[66]:

Սիրիական թագավորությունը կարճ կյանք է ունենում, և Ֆրանսիան կարողանում է հասնել իր ծրագրերի իրագործմանը՝ Սիրիան դարձնելով մանդատային գոտի: Փաստորեն, Ֆեյսալի հեռանալով վերջ է դրվում Սիրիայում Հաշիմյան ժամանակաշրջանին, որը որակվում է որպես <<կանգառ՝ թուրքական իշխանություններից անգլիական և ֆրանսիական իշխանություններին անցում կատարելու համար>>[67]:

Բնականաբար, երկրում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են հայ տարագիրների վրա:

ընդհանուր կոնգրեսի գործադիր կոմիտեն, սակայն, միաձայն մերժում է այդ համաձայնագիրը [տե՛ս Ալի Սուլթան. Սիրիայի պատմություն, Ֆեյսալ իբն Հուսեյնի իշխանությունը (1918–1920), էջ 214–215]:

[63] Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 82:

[64] Ալի Սուլթան. Սիրիայի պատմություն, Ֆեյսալ իբն Հուսեյնի իշխանությունը (1918–1920), էջ 356:

[65] Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 99:

[66] Ֆրանսիական զորքը Դամասկոս է մտել հուլիսի 25-ին: Ֆեյսալն Ալա Ադ-Դին Ադ-Դարուբիին նշանակել է սիրիական նոր կառավարության ղեկավար, ով հետագայում ընդունում է Ֆրանսիայի՝ Ֆեյսալին գահընկեց անելու, սիրիական բանակը ցրելու և այլ պահանջները: Վերջինս հուլիսի 28-ին հեռանում է Դամասկոսից, իսկ օգոստոսի 1-ին՝ Սիրիայից (տե՛ս Ali A. Allawi. Faisal I of Iraq, pp. 290–291):

[67] Ալի Սուլթան. Սիրիայի պատմություն, Ֆեյսալ իբն Հուսեյնի իշխանությունը (1918–1920), էջ 407:

Հարկ է նշել, որ հայ-արաբական փոխհարաբերությունները նշված ժամանակահատվածում հարթ չեն ընթացել: Երկու ժողովուրդների միջև առկա անվստահությունն ուներ իր օբյեկտիվ պատճառները: Երիտթուրքերի իրականացրած ցեղասպանությունից հետո հայերն իսլամական միջավայրում զգուշավորություն էին ցուցաբերում: Քաղաքական նկատառումներից ելնելով՝ Սիրիայի արաբներն իրենց հերթին զգուշանում էին հայկական համայնքից, քանի որ վերջինս ֆրանսիական իշխանությունների կողմից կարող էր օգտագործվել իրենց դեմ ազգային-ազատագրական պայքարի ժամանակ: Բայց նման թշնամանքը համատարած բնույթ չէր կրում՝ հաշվի առնելով Սիրիայի բնակչության բազմատարրությունը: Հակահայկական գործողությունները մասնակի և տեղական բնույթ են կրել, որոնք թեև իրողություն են, բայց չեն ստվերել արաբ ժողովրդի, նրա ղեկավարների դրական վերաբերմունքն ու հայ տարագիրներին վերահաս վտանգներից փրկվելու հնարավորության ընձեռումը:

Ֆեյսալի կառավարման տարիներին հայ գաղթականները կարողանում են ինտեգրվել տեղի հասարակական և սոցիալական կյանքին: Այս գործընթացում առաջին հերթին պետք է հաշվի առնել մի կարևոր իրողություն, որ ցանկացած ազգային փոքրամասնության գոյավիճակ պայմանավորված է ընդունող երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով և մշակութային մի շարք առանձնահատկություններով: Հարկ է նշել, որ հայերը Սիրիայում հայտնվել էին մի ժամանակաշրջանում, երբ Առաջին համաշխարհային պատերազմը չէր ավարտվել, սով էր ու Սիրիան դեռ համարվում էր Օսմանյան կայսրության մաս: Բացի այդ, հայ տարագիրները ցեղասպանությունը վերապրելուց հետո դարձել էին առավել զգուշավոր ու անվտանգության հարցին լուրջ էին վերաբերում: Սիրիայում նրանք հայտնվել էին նոր միջավայրում, որտեղ կային մի շարք էթնիկական տարբերակիչներ, որոնցից էին ոչ միայն կրոնը, այլ նաև լեզվական, մշակութային ու այլ գործոններ: Այդ ամենը կարևոր նշանակություն է ունենում հայ տարագիրների համար՝ նպաստելով սեփական էթնոմշակութային անհատականության պահպանմանը:

Ֆեյսալի իշխանության տարիներին հայ տարագիրները փորձում էին սոցիալապես կայանալ, որին մեծապես նպաստում էին վերջինիս ընդունած մի քանի որոշումներ՝ պարտքերի հետաձգման, բյուջեից որոշ գումարներ հայերին տրամադրելու վերաբերյալ: Բացի այդ, ինչ-որ չափով մեղմացել էր ցեղասպանությունը վերապրելու ցնցումը. նրանք սկսել էին հարմարվել օտար միջավայրին, յուրացնել կենցաղը, տիրապետել լեզվին: Ընդհանուր առմամբ՝ այդ տարիներին հայ տարագիրները չէին կարող լուրջ հաջողությունների հասնել տնտեսության մեջ՝ նոր գործարաններ, արտադրություններ հիմնել: Այս ժամանակահատվածում նրանք սահմանափակվում էին առօրյա ապրուստի խնդիրները հոգալով՝ հիմնականում օրավարձով էին աշխատում կամ զբաղվում մանր առևտրով: Այս ընթացքում արաբների մոտ հայ գաղթականների նկատմամբ տիրող դժգոհություններին անդրադառնում են տեղի թերթերը: Այսպես,

<<Աթ-Թակադդում>> թերթն անդրադարձ ու վերլուծություն է կատարել հայերի՝ Սիրիայում ունեցած ներդրմանն ու ընդգծել նրանց կատարած գործը: <<Տարագիրների ազդեցությունը>> հոդվածում կարդում ենք. <<Ճշմարտությունից շեղված չենք լինի, եթե հայտնենք մեր երկրի որոշ բնակիչներին, որոնք դժգոհ են Անատոլիայի տարագիրների (հայերի – Ն. Մ.) մեզ մոտ գալուց, որի արդյունքում աշխատող ձեռքի աճ ունենք: Վերջինիս պակասը կար մեր երկրում ... Տարագիրներից շատերն արդյունաբերական աշխատանքներում փորձ ունեն, աշխուժացնում են աշխատաշուկան: Եթե չլինեին հայ տարագիրները, որոնք ցանում են, հնձում, ապա շատ հողեր անմշակ կմնային>>[68]:

Երկրի սոցիալական ոլորտում հայ տարագիրների՝ կարճ ժամանակամիջոցում արձանագրած հաջողություններին անդրադարձել են արաբ պատմաբանները՝ քննելով դրա պատճառները: Վերջիններս հայ գաղթականների էթնիկ վարքագծի մեջ նկատում են իրեն արագ վերագտնելու, համակերպվելու և ազգային ինքնությունը պահելու միտում: Չնայած հայերը ստիպված էին աշխատել օրվա ապրուստի համար, բայց դրան զուգահեռ հիմնում էին դպրոցներ, մշակութային հաստատություններ և այլն. <<Հայ տարագիրները գործում էին տարբեր բնագավառներում՝ զուգահեռաբար ու արդյունավետ: Իրենց պահում են առողջ բանականություն ունեցող մարդու նման, մի երկրում, որն իրենց հոգատարություն է ցուցաբերել>>[69]:

Արաբ իրավաբան, պատմաբան, <<Արմենոցիդ>> եզրույթի հեղինակ Մուսա Պրենսը նշում է երկու կարևոր հատկանիշ, առանց որոնց հայ տարագիրների համար դժվար կլիներ հաղթահարել ցեղասպանության բարդույթը: Հայկական էթնոհոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ նա եզրակացնում է, որ հայի տեսակն ունի ցեղային բացառիկ երկու հատկություն. <<Առաջինը՝ ընտելացումի հատկութիւնն է, երկրորդը՝ կենսունակութեան>>[70]: Հենց սրանք են պայմանավորում հայկական լինելիությունը:

Հայ տարագիրներին բնութագրելու առումով Մեծ Բրիտանիայի էքզեթերի համալսարանի դոկտոր, Սիրիայի և Լիբանանի էթնոմշակութային հարցերով զբաղվող Նիկոլա Միգլիորինոն ևս նշում է բնորոշ մի քանի հատկություն. առաջին հերթին ընդգծում է նրանց վճռականությունն ու ձգտումը Սիրիայում իրենց <<Հայաստանը>> կամ հայկականը վերականգնելու ուղղությամբ: Հայտնվելով էականորեն տարբերվող, մասամբ նաև օտար միջավայրում՝ գաղթականները փոխօգնության էին ձգտում դժվարությունները և ճգնաժամերը հաղթահարելու համար: Նրանց մոտ <<վերականգնելու

---

[68] Հալեպի <<Աթ-Թակադդում>> թերթի վավերագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին օսմանյան պետության մեջ ու Սիրիայում, էջ 185:

[69] Սամիր Արբաշ. Հայաստան, հող և ժողովուրդ, Բեյրութ, 1991, էջ 213 (արաբ.):

[70] Մ. Պրենս. Ապագայի հեռանկար. հայկական լինելիությունը.– <<Ազդակ>> (Բեյրութ), ԽՍ տարի, 19. VIII. 1967:

վճռականությունը բխում էր առկա համայնքի ուժեղ համախմբվածությունից ու այն փաստի գիտակցումից, որ ցեղասպանությունը, իրոք, կարող է ոչնչացնել հայկական մշակույթը>>[71]:

Սիրիայում հայ տարագիրների կողմից իրենց սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված ջանքերի պատկերն ամբողջացնելու առումով մեջբերենք սիրիացի պատմաբան Օսման Աթ-Թուրքի հետևյալ դիտարկումը. <<Երբ նրանք ոտք դրեցին մեր հողի վրա, սեփական ձեռքերն էին իրենց միակ ապավենը: Նրանք իրենց կատարած ծանր աշխատանքով վաստակեցին իրենց ապրուստը: Եվ այդ դժվարությունների հետ մեկտեղ նրանք հասարակության մեջ իրենց հարգալի տեղը զբաղեցրին, մասնակցեցին երկրում արտադրության զարգացմանը, տնտեսության մակարդակի աճին>>[72]:

Այսպիսով, չնայած քաղաքական, կրոնական, լեզվական և այլ խոչընդոտող հանգամանքներին, խնդրո առարկա ժամանակաշրջանում Սիրիայում հայտնված հայ տարագիրները կարողանում են համագործակցել արաբների հետ՝ աստիճանաբար բարելավելով իրենց վիճակը: Եթե 1915–1917 թթ. սիրիացի արաբների օգնությունը հայերին հիմնականում անհատական բնույթ ուներ, ապա Ֆեյսալի կառավարման տարիներից դրան զուգահեռ տարագիրներին աջակցություն է ցուցաբերվում նաև կառավարական մակարդակով:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունից հետո Սիրիա գաղթած հայերը վերաձևավորում են տեղի հայ համայնքը: Եթե սկզբնական ժամանակահատվածում առաջ քաշված հարցերն ու խնդիրները հիմնականում քննարկվում են արաբների կողմից հայ տարագիրներին ցուցաբերվող օգնության, ապա 1920-ական թվականների սկզբից՝ հայ-արաբական համագործակցության և փոխօգնության համատեքստում:

Նարինե Մարգարյան – պ. գ. թ., <<Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ>> հիմնադրամի գիտական քարտուղար: Գիտական հետաքրքրությունները՝ Հայոց ցեղասպանության հետևանքով Մերձավոր Արևելք տարագրված գաղթականության հիմնահարցեր: Հեղինակ է 1 մենագրության և 10-ից ավելի հոդվածի:
nmargaryan@gmail.com

[71] N. M i g l i o r i n o. (Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, Studies in Forced Migration, vol. 21. Oxford, 2008, p. 47.

[72] *O u s m a n Ա թ - Թ u r q. Էջեր հայ ժողովրդի պատմությունից, Հալեպ, 1960, էջ 284 (արաբ.):*

REFERENCES

Adanayi hayoc badmutiun, khmbagrets Piuzant Eghiaiean, Antilias - Libanan, 1970 (In Armenian).
ʻArbash Samīr. Ārmīnīa, Ārḍ wa Shʻab, (Bayrūt, Dār A-Rīḥānī, 1991 (In Classical Arabic).
ʻUthmān At-Turk, Ṣahifaḥāt min Tārīkh Al Umma² Al Ārmaniya², (Halab, AlĀhrām, 1960) (In Classical Arabic).
«Arev» (Gahire), D dari, 29. I. 1919 (In Armenian).
Aghbashean Yovh. Arapagan azkayin-azadakragan zartonke (hamarod noter), Beyrut, 1959 (In Armenian).
Ali A. Allawi. Faisal I of Iraq, Yale University Press, 2014.
Al-Yaffī N'ayīm. Majazir Al-Ārman wa muq'f Al-Raiya Al ʻam Al-ʻArabīya² minha, Ladziq'iya, 1992 (In Classical Arabic).
Arīsyān N. Aṣḍa' Al-Ibāda² Al-Ārmaniya² fī As-Ṣiḥāfa² As-Sūriya² 1887–1930, Bayrūt, 2004 (In Classical Arabic).
Boyajean D. Haygagan lekeone, Utertaun, 1965 (In Armenian).
Chilingiryean Eghishe episk. Nkarakrutiun Erusaghemi - Halebi- Damasgosi kaghtakanagan ev vanakan zanazan tipvats ev anckeru 1914–1918, Erusaghem, 1927 (In Armenian).
Crows of the Desert. Memoirs of Levon Yotnakhparian, California, 2012.
Eghiaiean P. Zhamanagagic patmutiun katoghigosutean Hayoc Giligioy 1914–1972, Antilias, 1975 (In Armenian).
El Gusein F°aiz. Beduin Naotable of Damascus, Martyred Armenia, London, 1918.
Galfaean G. Kirk Elits, Peyrut, 1955 (In Armenian).
Garamanukean A. Haygagan Lekeone badmakan, iravakan u kaghakagan harceru loysin tag ev vaverakrer. – «Haygazean hayagidagan handes» (Peyrut), 1974 (In Armenian).
«Giligia» (Adana), A tari, 14. III. 1919; 23. V. 1919; 17. VI. 1919; 27. VI. 1919 (In Armenian).
«Hay Tzayn» (Haleb), A tari, 6. XII. 1918; 16. XII. 1918; 23. XII. 1918; 25. I. 1919; 22.I.1919; 15. II. 1919 (In Armenian).
Hovhannisyan N., Sargsyan H. Sirian ankakhutyan hamar mghvogh paykarum (1917–1946), Yerevan, 1975 (In Armenian).
Migliorino N. (Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, Studies in Forced Migration, vol. 21, Oxford, 2008.
«Miutiun» (Gahire), E tari, 1919, iulis-okostos (In Armenian).
Nadjaryan E. Hay-arabakan pokhharaberutyunnere Siriayum (1918 hoktember-1919 hunis). – Merdzavor Arevelqi erkrner u zhoghovurdner, h. 6,Yerevan, 1974 (In Armenian).
Pipes D. Greater Syria. The History of an Ambition, NY, 1992.
Poghsyan S. Haykakan (Arevelyan) legeoni 1916–1920 tt. kazmavorman patmutyunits. –Patmutyun, h.1, Yerevan, 2002 (In Armenian).

Sahakean A. Damaskosen Agapa (iusher Medz Egherni oreren). – «Hayrenik» (Bosten), 1950, № 1, № 2, № 4 (In Armenian).
Ṣahifāt wa Ūathā'iq min Jarīda² "At-Taqaddum" Al-Halabīya² 'an Al-Āḥūāl Al-Ārmaniya² wa Al-'Arabīya² fī Ad-Daūla² Al-'Uthmānīya², wa Al-Buldān Ash-Shāmīya², (Ḥalab, Dār-Ṭalās, 1992) (In Classical Arabic).
Said Amin. Vosstaniye arabov v XX v., M., 1964 (In Russian).
Sultan 'Ali. Tārīkh Sūrīya, Ḥukm Fayṣal bn Ḥuseyn, (1918–1920), Dimashq, 1996 (In Classical Arabic).
Sultan 'Ali. Tārīkh Sūrīya, Nihaya al- Ḥuqm Al -Turkīya, (1908–1918), Dimashq, 1996 (In Classical Arabic).
Topuzyan H. Siriayi ev Libanani haykakan gaghtodjakhneri patmutyun (1841–1946), Yerevan, 1986 (In Armenian).
«Veradznunt» (Pariz), G dari, 15. IV. 1919 (In Armenian).
Zahr Ad-Dīn Ṣalih. Aṣāla² al-'Arab wa Al-Ūafā' Al-Armanī, Bayrūt, 2000 (In Classical Arabic).

ДЕПОРТИРОВАННЫЕ АРМЯНЕ В СИРИИ В ГОДЫ ПРАВЛЕНИЯ ФЕЙСАЛА ИБН ХУСЕЙНА (Октябрь 1918 г. – июль 1920 г.)

НАРИНЕ МАРГАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Геноцид армян, Сирия, Алеппо, Фейсал ибн Хусейн, армянские изгнанники, арабы, проармянская политика, помощь, сбор сирот.

В годы осуществленного турецким правительством Геноцида армян депортированные армяне сталкивались с опасностью ассимиляции.

Во время правления в Сирии короля Фейсала (1885–1933) депортированным армянам наряду с индивидуальной помощью предоставлялась также официальная. Помощь сирийских арабов армянам достигла своего апогея в 1919 году, когда были приняты специальные правительственные решения. Политика короля Фейсала по содействию национальным меньшинствам во многом способствовала улучшению положения армянских изгнанников. Фейсал принял решение о возвращении армянских детей, женщин и девушек в армянскую среду, которое дало новый импульс работам по сбору армянских сирот в сирийских пустынях. Еще одним важным решением правительства было предоставление армянским изгнанникам месячного жалования и еды. Фейсал встречался с армянским духовенством и политическими деятелями с целью обсуждения вопросов, касающихся армянских изгнанников. Депортированные армяне с помощью арабов не только пережили Геноцид, но и, преодолев трудности, превратились в полноправных граждан Сирии.

Нарине Маргарян – к. и. н., ученый секретарь фонда «Музей-институт Геноцида армян». Научные интересы: проблемы беженцев, депортированных на Ближний Восток в результате Геноцида армян. Автор 1 монографии и более 10 статей. nmargaryan@gmail.com

THE ARMENIAN DEPORTEES IN SYRIA DURING THE REIGN OF FEYSAL IBN HUSEYN (October 1918 – July 1920)

NARINE MARGARYAN

S u m m a r y

Key words: Armenian Genocide, Syria, Aleppo, Feysal ibn Huseyn, Armenian exiles, Arabs, pro-Armenian policy, support, orphans gathering activities.

In the years of the Armenian Genocide implemented by the Turkish Government, the Armenian deportees faced the constant threat of losing their national identity.

During the rule of King Feysal (1885–1933) in Syria the assistance for deportees of individual character was implemented also through official channels. The Syrian Arab support peaked in 1919, when special governmental decisions were made on that issue. The Feysal policy to support national minorities fostered the assistance to Armenian deportees. One of the most essential decisions of Feysal was to return the Armenian children, women and girls to the Armenian environment, which gave a new impetus to the orphan collection activities in Syrian deserts. Another important step was the governmental decision to provide food and monthly allowances to the Armenian deportees. Feysal even met with Armenian political and spiritual leaders to discuss the issues related to the Armenian deportees. With the assistance of Arabs, Armenian deportees not only survived the Genocide but overcoming the difficulties transformed from deportees into full citizens.

Narine Margaryan – Candidate of Sciences in History, Scientific secretary at the Armenian Genocide Museum Institute Foundation. Scientific interests: Issues of Armenian Refugees during the Armenian Genocide in the Middle East. Author of one monograph and more than 10 papers. nmargaryan@gmail.com: